ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0024, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«05» 04 2019 թ.

№ ԱԿ 576-2019

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ Շ.ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 02.04.2019թ. 341-75 թվակիր գրության, հայտնում ենք, որ 2018թ. հունիսի 1-ից մինչ օրս Հանրապետության նախագահի աշխատակազմում կրճատման է ներկայացվել երկու չշահագործվող, սակայն սարքին վիճակում գտնվող ծառայողական ավտոմեքենա:

Քանի որ Հանրապետության նախագահի աշխատակազմը որդեգրել է ֆինանսական միջոցների տնտեսման քաղաքականություն՝ նպատակահարմար է համարվել կրճատել դրանք, և այդ գործընթացը կրելու է շարունակական բնույթ:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ կրճատվող մեքենաները չեն շահագործվել, հայտնում ենք նաև, որ 2018թ. հունիսի 1-ից մինչ օրս Հանրապետության նախագահի աշխատակազմում որևէ վարորդ չի կրճատվել:

Հարգանքով՝ Է. ՏԱՐԱՍՅԱՆ